Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի գյուղապետարան

Հասցե՝1810 , Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 11 փ. տնակ 35
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

N0ԼՄ/Լ2025/94

« 19 » 09 2014 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Նալբանդյանին

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի գյուղապետի թիվ 22, 23, 24 որոշումները և ավագանու թիվ 11-Ա, 12-Ն և 13 որոշումները և թիվ 06 արձանագրության քաղվածքը:

Առդիր 11 թերթ:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 10 » 09 2014թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնանցք համայնքի ավագանու 07.07.2014թ. թիվ 09 որոշումը և ՀՀ կառավարության 19.02.2004թ-ի թիվ 157-Ա որոշումը, Լեռնանցք համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-040-0005-0003 ծածկագրում գտնվող 184.78 քմ բնակելի տունը և 1192 քմ տնամերձ հողամասը (անշարժ գույքի սեփականության վկայական N 04092014-06-0021 տրված 04.09.2014թ.) նվիրել Սամվել Սարիբեկի Վարդանյանի ընտանիքին:

1. ինքը – Վարդանյան Սամվել Սարիբեկի – 1961թ.
2. կինը – Շոյան Էմմա Ալբերտի – 1961թ.
3. աղջիկը – Վարդանյան Արաքսյա Սամվելի – 1987թ.

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 18 » 09 2014թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 23

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Համայնքային ծառայության մասին" օրենքի 19-րդ հոդվածի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.09.2006 թ-ի թիվ 15 հրամանի պահանջների, 24.10.2014թ-ին ժամը 14[00]-ին անցկացնել գյուղապետարանի աշխատակազմի կրտսեր համայնքային ծառայողներ՝ առաջատար մասնագետ Արաքսյա Մացակյանի (ծածկագիր -3.1-1), առաջատար մասնագետ՝ Գևորգ Վարդանյանի (ծածկագիր -3.1-2), առաջին կարգի մասնագետ՝ Գայանե Վարդանյանի (ծածկագիր -3.2-2) հերթական ատեստավորումը:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ

« 18 » 09 2014թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

ԼԵՌՆԱՆՑՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 –րդ հոդվածով

որոշում եմ՝

1. Լեռնանցքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծած. 1.2-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2014թ. հոկտեմբերի 24 –ին ժամը 16^{00} -ին անցկացնել մրցույթ:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

3. Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել համայնքի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անահիտ Մելոյանին:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«16» 09 2014թ.

հեռ. 093 32 22 39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 33-րդ մասի. համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լեռնանցք համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Ծախոյան			
Ս. Վարդանյան			
Լեռնանցքի գլխավոր			Լ. Արգարյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Լեռնանցք համայնքի ավագանու 2014 թ.
սեպտեմբերի 16-ի թիվ 11-Ա որոշման

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

2. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

3. Բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, ինչպես նաև սույն կարգով:

4. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը կարող է տեղի ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում:

5. Գյուղապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում է վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կարգով:

6. Տեղական ինքնակառավարմանը մասնակցության իրավունք ունի համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

7. Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ բնակիչների ոչ պակաս, քան երկու կամ չորս տոկոսը: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունը ստորագրում են համայնքի՝ դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին:

Բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանում է ավագանու կանոնակարգով:

8. Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների նախաձեռնությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ներկայացնում է ավագանու նիստին՝ ավագանու քննարկմանը:
9. Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և օրենքով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական քննարկումից առնվազն վեց ամիս հետո:
10. Համայնքի ղեկավարը.

ա) համայնքի բնակիչների համար ստեղծում է բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը՝ այդ նպատակով օգտագործելով համայնքի ինտերնետային կայքը և այլ իրազեկման միջոցներ:

բ) ապահովում է համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում, ինչպես նաև ստեղծում է համապատասխան անհրաժեշտ պայմաններ՝ այդ միջոցառումների մասնակցելու ցանկություն հայտնած համայնքի հաշմանդամների և սակավաշարժուն խմբերի համար:

գ) կազմակերպում է տեղական ինքանակռավարմանն առընչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ, դրանց վերաբերյալ առաջարկությունների ընդունումը և ներկայացումը նախաձեռնողներին և նախագծերի հեղինակներին:

դ) համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում և ներգրավում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերում:

11. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ և քննարկումներ:

Լեռնանցքի գյուղապետ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 16 » 09 2014 թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12-Ն

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "ՏԻՄ" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, Լեռնանցք համայնքի 2014թ-ի բյուջեից կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. 4729 հոդվածի 09/04/01 ենթախմբից 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ տալ 4239 հոդվածի 06/03/01/ ենթախմբին.
2. 4234 հոդվածի 08/03/01 ենթախմբից 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ տալ 4239 հոդվածի 06/03/01/ ենթախմբին.
3. 5112 հոդվածի 06/03/01/ ենթախմբից 800000 (ութ հարյուր հազար) դրամ տալ 5129 հոդվածի 06/03/01/ ենթախմբին.
4. 5122 հոդվածի 01/01/01 ենթախմբից 200000 (երկու հարյուր հազար) դրամ տալ 5129 հոդվածի 06/03/01/ ենթախմբին.

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Չախոյան			
Ս. Վարդանյան			

Լեռնանցքի գլխավոր՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 16 » 09 2014 թ. հեռ. 093-32-22-39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆԻՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

Համայնքի ավագանին որոշում է՝ Լեռնանցք համայնքի բնակիչ Էմմա Աշոտի Պողոսյանի ընտանիքի բնակարանային պայմանները բարելավելու համար ուղերձ հղել ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ, աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների հատկացման հարցերով հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ղուլարյանին:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Չախոյան			
Ս. Վարդանյան			

Լեռնանցքի գլխավոր քարտուղար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«16» 09 2014 թ.

հեռ. 093-32-22-39

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ, ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ՈՒՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆԻՆ

Խնդիրը, որի կապակցությամբ ցանկանում ենք դիմել Ձեզ, վերաբերվում է Լեռնանցք համայնքի բնակիչ Էմմա Պողոսյանի ընտանիքին, որոնք ՀՀ կառավարության 2008 թ.-ի նոյեմբերի 13-ի թիվ 1337 - Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն հաշվառված են ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած՝ 2008թ-ի դեկտեմբերի 15-ի դրությամբ Լեռնանցք համայնքի գլուղապետի կողմից հաստատված բնակարան ստանալու իրավունք ունեցող ընտանիքների ցուցակում:

02.09.2011թ. Սպիտակ քաղաքում ՀՀ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կողմից կայացված արտագնա նիստի ժամանակ կազմվել է թիվ 16 արձանագրությունը, որի թիվ 3 հավելված 4-րդ կետով որոշվել է ընտանիքին չընդգրկել բնակելի տուն ստացող անձանց ցուցակում այն հիմքով, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ ճշտված տեղեկատվության հանաձայն Էմմա Պողոսյանը ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքում հաշվառվել է 1990թ.-ին:

Որպես իրավական հիմնավորում նշվել է երկրաշարժի պահին համայնքում անձնագրային հաշվառում չունենալը:

31.10.2011թ-ին ՀՀ վարչական դատարան է դիմել Էմմա Աշոտի Պողոսյանը և կայացվել է վճիռ ի օգուտ հայցվորի, որը օրինական ուժի մեջ է անցել 2012թ-ի սեպտեմբերի 21-ին:

Հիմք ընդունելով այն փաստը, որ նրանք ընտանիքով մինչև երկրաշարժը փաստացի բնակվել են Լեռնանցք գյուղում, կորցրել են բնակարան և հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում ենք որ ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք գյուղի բնակիչ Էմմա Աշոտի Պողոսյանի ընտանիքը համարվում է բնակարանի կարիքավոր:

Խնդրում ենք Ձեզ վերանայել հանձնաժողովի որոշումը և հնարավորության սահմաններում աջակցել Լեռնանցք համայնքի բնակիչ Էմմա Աշոտի Պողոսյանի ընտանիքին՝ աղետի հետևանքով կորցրած բնակարանի դիմաց բնակարան ստանալու հարցում:

Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը Լեռնանցք համայնքում իրականացվող բնակարանաշինական ծրագրերին և երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն գործընթացին Ձեր մասնակցության համար:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ս. Բաղալյան			
Ա. Գևորգյան			
Ա. Չախոյան			
Ս. Վալդանյան			

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան

19.09.2014թ.

ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 05.09.2014թ-ի ավագանու

թիվ 06 արձանագրությունից

Նիստին ներկա էին ավագանու 7 անդամներից 3-ը:

Օրակարգում – 1. Տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին:

Քվորում չլինելու պատճառով նիստը չի կայացել:

Լեռնանցքի գյուղապետ՝ Լ. Աբգարյան